



**ԿԱՍԻԱ ՏԷՕՎԼԵԹԵԱՆ-ՃՂԱԼԵԱՆ
(1963-2023)**

*Խմբագիր՝ Մարուշ Երամեան
Էջադրում՝ Շահէ Լուսարարեան
Տպագրութիւն՝ Nubar Digital*

ԳՈՅԺ

Եգիպտոսի ՀԲԸՄիության մեծ ընտանիքը
Դառն կսկիծով կը գուժէ անժամանակ շիջումը
ՀԲԸՄի Շրջանակային Ցանձնաժողովի վարչության
Երկարամեայ ատենադարանի

ԿԱՍԻԱ ՏԷՕՎԼԵԹԵԱՆ-ՃՂԱԼԵԱՆԻ

Որ իր մահկանացուն կնքեց 3 Յունիս 2023 թուականին
Գահիրէի մէջ, յետ կարճատեւ հիւանդութեան.

Յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 4 Յունիս
2023-ի յետմիջօրէին, Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ
մայր եկեղեցւոյ մէջ, ուրկէ մարմինը փոխադրուեցաւ
Հելիոպոլսոյ Ամենայն Սրբոց Ազգային
Գերեզմանատունը եւ ամփոփուեցաւ ընտանեկան
ղամբարանին մէջ:

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ
ՏՈՔԹՈՐ ԳԷՈՐԳ ԵՐԶՆ ԿԱՑԵԱՆ
Ատենապետ Եգիպտոսի ՀԲԸՄիության
Շրջանակային Ցանձնաժողովին

Ողբացեալ Կասիա Ճղալեանի սգակիր հարազատներ եւ բարեկամներ,

Այսօր եկած ենք մեր յարգանքի վերջին տուրքը մատուցելու մեր գաղութին մէջ սիրուած, գնահատուած եւ աշխոյժ գործունէութիւն ունեցած ողբացեալ Կասիա Տէօվլէթեան Ճղալեանին:

Մեր գաղութին մէջ վերջին շրջանին ցաւալիօրէն ետեւէ ետեւ անողոք հիւանդութեան զոհ կը դառնան իրենց ուժերուն լիութեան մէջ եղող եւ կեանքի փորձառութիւն ձեռք ձգած անհատներ, մեծ բաց մը ձգելով իրենց ետին: Կասիա Ճղալեանը անոնցմէ մէկն էր:

Ան ծնած է 1963-ին, Նորայր եւ Արաքսի Տէօվլէթեաններուն հայրենասէր եւ ազգասէր ընտանիքին մէջ: Տարրական ուսումը ստացած է Գալուստեան Ազգային Վարժարանին մէջ, ապա երկրորդական ուսումը շարունակած է Ռամսէս Գոլէճի մէջ, զոր աւարտած է 1981-ին: Այնուհետեւ յաճախած է Գահիրէի Ամերիկեան Համալսարանը, ուր հետեւած է տնտեսագիտութեան եւ շրջանաւարտ եղած է 1985-ին: Իր ուսումնական շրջանին առընթեր, հետեւած է Trinity College of Music-ի դաշնակի դասընթացքներուն եւ 1980-ին ստացած համապատասխան վկայական:

1986-ին ամուսնացած է տիար Հրայր Ճղալեանի հետ:

Կասիա Ճղալեան անսակարկ կերպով կը մասնակցէր եւ կ'օժանդակէր համայնքիս մէջ իրագործուող բոլոր ձեռնարկներուն: Ան պատրաստուած, տրամաբանող եւ հաւասարակշռուած միտք մը ունէր, ու տարբեր առիթներով ելոյթներ ունեցած է զանազան նիւթերու շուրջ:

Կասիան իր գործունէութիւնը ծաւալած է գլխաւորաբար Գեղարուեստասիրացի եւ ՀԲԸՄ-ի մէջ:



Գեղարուեստասիրացի մէջ անդամ եղած է միութեան Երիտասարդաց Յանձնախումբին եւ մաս կազմած՝ Արմենական շարժումին: Նոյնպէս ան շնորհալի անդամուհիներէն էր միութեան Զանգեզուր պարախումբին:

Ան միացած է Ռամկավար Ազատական Կուսակցութեան շարքերուն, ուր ունեցած է աշխոյժ գործունէութիւն: Մաս կազմած է ՌԱԿ Մամուլի խմբագրական կազմին, Գահիրէէն (Եգիպտոս):

ՀԲԸՄ-ի պարագային, տասնամեակներ շարունակ եղած է Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովին ատենադպրուհին, ինչպէս նաեւ միութեան «Կռունկ» երգչախումբի գոյութեան ամբողջ ընթացքին՝ անոր փորձառու դաշնակահարուհին:

Հայաստանի անկախութենէն ետք, Հայաստանի Հանրապետութեան Գահիրէի մէջ բացուած դեսպանատան ընկերային ձեռնարկներուն իր օժանդակութիւնը կը բերէր:

Գործի ասպարէզին մէջ, օրուան առաջին կէսին կ'օժանդակէր իր հօր, որ սեփականատէրն էր Ոսկետառ տպարանին: Իսկ օրուան երկրորդ կէսին, փնտռուած եւ շատ սիրուած դաշնակի ուսուցչուհի մըն էր:

Այս եզակի անձին գործունէութեան մասին տրուած տեղեկութիւնները ցոյց կու տան իր շիջումով մեր համայնքին ունեցած մեծ կորուստը:

Ազգային Իշխանութեան, Արեւի Շրջանակի եւ ՀԲԸՄ-ի կողմէ մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք ողբացեալին ամուսինին՝ պր. Հրայր Ճղալեանին, քոյրերուն՝ Տիկին Մարալ Ոսկեանին եւ զաւակներուն՝ Վայքին, Վանին եւ Վաչակին, Տէր եւ Տիկ Էմմանուէլ եւ Կարինէ Սիկալասին եւ իրենց զաւակներուն՝ Էմիլիին եւ Մարիօին, ինչպէս նաեւ համայն Տեօվլէթեան, Ճղալեան, Վարժապետեան, Գայսէրլեան, Ուստայեան, Սամուէլեան եւ Նազգաշեան ընտանիքներուն:

Ողբացեալին համար Ամենակալէն կը հայցենք երկնային բերկրանք:

Խունկ եւ աղօթք իր անթառամ յիշատակին:

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ

Ռամկավար Ազատական Կուսակցության Եգիպտոսի Շրջանային Վարչութիւնը, ԱՐԵԻ շրջանակն ու Կոկանեան Սրահի Վարչութիւնը սրտի դառն կակիծով կը գումեն Ռ.Ա.Կ.-ի հաւատաւոր նուիրեալ, Հ.Բ.Ը.Մ.-ի Եգիպտոսի Շրջանային Վարչութեան եւ Կոկանեան Սրահի մշակութային յանձնախումբի անձնուէր անդամ՝ ընկերուի Կասիա Տեովլէթեան-Ճղալեանի տխուր եւ վաղաժամ մահը, որ պատահեցաւ տոյն թուականի Յունիս 3-ին:

Անդարման է Եգիպտահայութեան ցաւը, կորուստը՝ անփոխարինելի:

Լուսահոգի մեր ընկերուիին իր ապրելակերպով եւ գործունէութեամբ առոյգ կամուրջ մը ըլլալով Եգիպտահայ համայնքին ու Մայր Հայրենիքի միջեւ՝ անմնացորդ աւանդ ունեցած է Հայրենիք-Սփիւռք համագործակցութեան եւ միասնականութեան:

Առանձնապէս արժէքաւոր եւ մնայուն եղաւ Ռ.Ա. Կուսակցութեան գնահատանքի յատուկ վկայագիրով պարգեւատրուած ընկերուի ճղալեանի՝ 2022 թուականին կատարած նուիրաբերումը արխիւային հարուստ նիւթերու, որոնց շնորհիւ, Երեւանի մէջ, Ռ.Ա.Կ.-ի Կեդրոնական Վարչութեան եւ Հայաստանի Հանրապետութեան Ազգային Արխիւի աշխատասիրութեամբ տպագրուեցաւ «Ռամկավար Ազատական Կուսակցութեան կազմաւորումն ու գործունէութիւնը 1915-1951 թթ. փաստթուղթերու ժողովածու» ծաւալուն աշխատութիւնը՝ նուիրուած կուսակցութեան 100-ամեայ յոբելեանին:

Խնկաբոյր աղօթքի, յաւերժ լոյսի եւ երկնային արքայութեան մէջ թող հանգչի հայեցի հոգիդ, սիրելի Կասիա:

Վշտակիր ենք բոլորս:

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



Մեծայարգ
Տիար Հրայր Ճըղալեան
Գահիրե, Եգիպտոս

Ձեր սիրելի տիկնոջ, Կասիա Ճըղալեանի վաղահաս եւ անժամանակ մահուան տխուր առիթով, մեր խորագգաց ցաւակցութիւնները կը փոխանցենք ձեզի, նաեւ Կասիայի քոյրերուն՝ Մարային, Կարինէին եւ անոնց ընտանիքներուն:

Հիմնականում անխորունկ բաց մը կը ձգէ անկասկած, սակայն համայնքային եւ միութեական կեանքէն ներս իր մնայուն դրոշմով, ապրող յուշերով եւ երախտագիտութեան զգացումներով, ան երկար պիտի ապրի զինք սիրողներու եւ յարգողներու սրտերուն եւ մտքերուն մէջ:

Անկեղծ վշտակցութեամբ՝

ՊԵՐՃ ՍԵՊՐԱԿԵԱՆ
ՆԱԽԱԳԻ



ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կենտրոնական Վարչություն

Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Հանրապետության փողոց 47, Հեռ. +(374) 77-36-82-68
e-mail: ramkavar@gmail.com

Եզիպտոսի ՌԱԿ Շրջանային վարչության ատենապետ,
վշտացեալ ընկեր Հրայր Ճաղալեանին,
Վարչության անդամներին,
կուսակցական ընկեր-ընկերուհիներին,
Եզիպտոսի Հայկական համայնքին

Հարգելի՛ ընկերներ,

Խոր վշտով տեղեկացանք Եզիպտոսի ՌԱԿ Շրջանային Վարչության նվիրյալ անդամ, Հայ Համայնքի կարկառուն ներկայացուցիչ, ընկերուհի Կասիա Տեովիլեաթեան-Ճըղալեանի անժամանակ մահվան մասին:

Լուսահոգի մեծահարգ ընկերուհին իր ապրելակերպով և գործունեությամբ մշտապես եղել է Եզիպտոսի համայնքի և Մայր Հայրենիքի կողքին, անմնացորդ ավանդ է ներդրել Հայրենիք-Սփյուռք համագործակցությանը և միասնականությանը, նվիրյալ զավակն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի...

Հատկապես անգնահատելի և մնայուն եղավ 2022թ. ընկերուհի Ճըղալեանի կողմից արխիվային հարուստ նյութերի նվիրաբերումը, որոնց շնորհիվ Երևանում՝ ՌԱԿ Կենտրոնական Վարչության և ՀՀ Ազգային արխիվի աշխատասիրությամբ տպագրվեց «Ռամկավար Ազատական կուսակցության կազմաւորումն ու գործունեութիւնը 1915-1951թթ., փաստաթղթերու ժողովածու» ծավալուն աշխատությունը՝ նվիրված կուսակցության 100-ամյա հոբելյանին:

ՌԱԿ Կենտրոնական Վարչությունը իր և Հայաստանյան ակումբների անունից խորին ցավակցություն է հայտնում հոգաշատ ամուսնուն՝ ընկեր Հրայր Ճըղալեանին, մաղթում համբերություն քույրերին, զավակներին, բոլոր հարազատներին, բարեկամներին, ընկերներին, Եզիպտոսի համայնքի անդամներին...

Նրա բացակայությունը անփոխարինելի կմնա բոլորիս սրտերում...

Աստված հոգին լուսավորի...

Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի...

ՌԱԿ ատենապետ՝

Հրայր Կարապետյան

ՌԱԿ ատենադպիր՝

Հովիկ Կարապետյան

Երևան, 04.06.2023





755 Mt. Auburn St., Watertown, MA 02472-1509 USA. Tel: 617-924-4455. Fax: 617-924-2887. Email: TCAdirector@aol.com

**Board of Directors
of USA and Canada**

President
Dr. Arshavir Gundjian

Vice President
Kevork Marashlian

Secretary
Hagop Vartivarian

Assistant Secretary
Mihran Toumajan

Treasurer
Maro Bedrosian

Assistant Treasurer
Ara Tcholakian

Members
**Carl Bardakian
Hilda Hartounian
Arto Berdge Manoukian
Mihran Minassian
Vatche Semerdjian
Hratch Torikian**

Executive Director
Aram Arkun

*Canada
Executive Secretary*
Salpi Margossian

*West Coast
Executive Secretary*
Mayda Kuredjian

**EMERITUS HONORARY
MEMBERS IN MEMORIAM**
**Dr. Haroutiun
Arzoumanian
Edmond Azadian
Hampartoum Berberian
Dr. Nubar Berberian
Flora Gopioian
Antranik Poladian
Dicran Simsarian**

Յարգելի Պր. Հրայր ճրդպեան, Տեղւեքեան ընտանիքի անդամներ
եւ սգակիր բարեկամներ,

Սրտի դառն կսկիծով իմացանք Ձեր հարազատին՝ Կասիա
Տեղւեքեան-ճրդպեանի անժամանակ գոյժը: Անցնող քանի մը
տասնամեակներուն ողբացեալին մասնակցութիւնը եզրափակեալ ազգային
բարեսիրական, կրթական, մշակութային եւ քաղաքական կեանքէն ներս
ունեցաւ կարեւոր ներդրում մը նոր սերունդի դաստիարակութեան եւ
հայրենասիրական զգացումներու ամրապնդման վրայ: Ծանօթ են Կասիային
այն անսակարկ նուիրումով կատարած բոլոր օժանդակութիւնները եւ
մասնակցութիւնը համայնքէն ներս իրագործուող բոլոր ձեռնարկներուն:

Մասնաւորաբար ակնյայտ են Կասիային ծաւալուն գործունէութիւնը
Գեղարուեստասիրացի եւ ՀԲԸՄի մէջ. ան նաեւ հաւատարմով միացած էր
Ռամկավար Ազատական Կուսակցութեան շարքերուն ունենալով գործօն
մասնակցութիւն:

Այս տխուր առթիւ Միացեալ Նահանգներու եւ Գանատայի ընտանիքը
կը յայտնէ իր ցաւակցութիւնները ընտանիքի անդամներուն, զաղափարի
ընկերներուն եւ ընկերական շրջանակին:

Յիշատակն արդարեւ օրինութեամբ եղիցի:

Ի Դիմաց՝
**ԹԷՔԷԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՐԱՆԵՐՈՒ ԵՒ ԳԱՆԱՏԱՅԻ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՇՈՒԹԵԱՆ**

**Յոկա. Արշալիր Կեօնճեան
Ատենապետ**

Պոստոն, Յունիս 5, 2023

ԿԱՍԻԱՅԻՆ ...

Երէկ, Շաբաթ Յունիս 3-ին, կը պատրաստուէի գրել քեզի թէ եկող Կիրակի Յունիս 11-ին պիտի հասնիմ Գահիրէ: Եւ ինչպէս յաճախ փորձած ենք ընել երբ իւրաքանչիւր այցելութեանս կը հանդիպինք եւ կը զրուցենք, ջերմացնելով մեր բարեկամութիւնը, որ սկսած էր ընտանեկան յարաբերութիւններու մէջէն, սկսելով 1990-ական տարիներէն մինչեւ այսօրը...: Բայց մահուանդ գոյժը, իմա բօթը՝ աւելի արագ շարժեցաւ քան իմ երկտողս: Եւ ես պիտի հասնիմ Գահիրէ բայց արդէն դուն մեկնեցար...:



Մեկնեցար Գահիրէէն եւ աշխարհէն...: Այս երկուքը որ դուն շատ կը սիրէիր քանի կը սիրէիր կեանքը: Կեանքը իր ամբողջութեանը մէջէն:

Մեր բարեկամութիւնը սկսած էր քրոջս, Անահիտ Սարգիսեան-ճէպէճեանի միջոցաւ՝ երբ Գահիրէ կ'ապրէր եւ ես յաճախ կ'այցելէի: Հայրդ՝ սիրելի Պրն. Նորայրը, «որդեգրած» էր Անահիտը երբ կ'ըսէր, «Անահիտը իմ չորրորդ աղջիկս է»: Այս ընտանեկան-անհատական բարեկամութիւնը շարունակուեցաւ: Ծնողքիդ, քոյրերուդ Մարալին, Կարինէին եւ իրենց ընտանիքներուն՝ բայց անպայմանօրէն ամուսինիդ՝ Հրոյին հետ:

Կասիա, դուն սիրեցիր կեանքը: Սիրեցիր հայը եւ հաւատարիմ մնացիր քու ազգային արժանապատուութեանդ եւ մինչեւ վերջ: Սիրեցիր երաժշտութիւնը եւ մշակոյթը եւ նախանձախնդիր էիր որ նոր սերունդը մեծնայ այդ սիրով, որովհետեւ անոնք՝ իմա երաժշտութիւնը եւ մշակոյթը, հոգիները կը ջերմացնեն եւ կ'առաջնորդեն բարիին եւ գեղեցիկին: Սիրեցիր Գահիրէն՝ եւ հաւատարիմ մնացիր գաղութին բարգաւաճման եւ ոչ մէկ ճիգ չէիր խնայեր հաւաքական կեանքի յառաջխաղացին համար: Սիրեցիր մարդը՝ բարեկամները եւ անոնց հետ կերտեցիր ուրախ ընկերային կեանք: Եւ ինչպէս չգնահատել քու անսահման սէրդ ամուսնոյդ՝ Հրոյին, որուն հետ քու կեանքդ կը բաժնէիր անսակարկ նուիրումով: Ու տակաւին սէրդ քոյրերուդ

եւ իրենց ընտանիքներուն հանդէպ: Ժպիտդ մնաց միշտ անպակաս քու դէմքիդ վրայ:

Մեր վերջին հանդիպումին անցեալ տարի, Գահիրէ՝ Կոկանեանի պարտէզի մէկ հաւաքական ընթրիքի մը ընթացքին՝ չդադրեցար պատմել: Խօսեցար այն բոլոր առողջական վիճակները որուն մէջէն դուն եւ Հրօն անցած էիք ու տակաւին: Խօսեցար տկար մարմնիդ մէջէն բայց միշտ զօրաւոր ու տոկուն կամքովդ...: Կը տեսնէի այն Կասիան որ ճանչցած էի, զօրաւոր եւ տոկուն...: Բայց չէ որ քեզի «գէբթըն» կը կոչէի...: Քանի միշտ տեսած էի քու մէջդ հայու տոկուն եւ անկոտորում հաւատքը եւ կամքը: Հաւատքը եւ կամքը ապրելու: Եւ ոչ միայն ապրելու այլ նաեւ շինելու: Շինելու գեղեցիկ եւ իմաստալից կեանքը:

Շնորհակալութիւն Կասիա քու բարեկամութեանդ համար: Դուն կերտեցիր զայն քու անկեղծութեամբդ եւ խանդավառութեամբդ: Շնորհակալութիւն այն արժէքի կեանքին եւ անոր գիտակցութեանը համար, որ դուն բաշխեցիր շրջապատիդ հետ: Կասիա, տակաւին շատ բան պիտի տայիր եւ կերտէիր կեանքին մէջ եւ անոր միջոցաւ, բայց...:

Կիրակի Յունիս 11-ին պիտի հասնիմ Գահիրէ: Կասիան հոն չէ...: Բայց վստահ եղիր որ կը տեսնեմ եւ բոլորս պիտի շարունակենք տեսնել քեզ: Նեղոսի ջուրերը, որ դուն շատ կը սիրէիր, պիտի բերեն քու հոգիդ մեր ափերը՝ քու հարազատներուդ եւ սիրելի Եգիպտոսի գաղութի անդամներուն եւ բարեկամներուդ եւ դուն պիտի շարունակես կիսել քու ժպիտդ եւ ուրախ դէմքդ մեր բոլորին հետ: Եւ անպայմանօրէն պիտի յորդորես բոլորս ըսելով, «ուրախ ապրեցէք»:

Կասիա՝ դուն ապրեցար ուրախ եւ մեկնեցար ուրախ, նոյնիսկ երբ ֆիզիքական ցաւերու մէջ էիր:

Սուրբ Հոգիին մխիթարութիւնը Հրոյին, Մարալին, Կարինէին եւ իրենց ընտանիքներուն եւ բոլոր հարազատներուն եւ Եգիպտահայ գաղութին: Ու աշխարհի չորս կողմը տարածուած բոլոր հարազատներուդ եւ բարեկամներուդ: Քու սէրդ եւ բարեկամութիւնդ աշխարհագրական սահման չունեցաւ եւ չունի...

Յաւակցօրէն եւ աղօթքով՝

*Հրայր Ճէպէճեան
Քուէյթ Յունիս 4, 2023*

ԿԱՍԻԱՆ

Իր կենդանագիրն ու մեր տխրությունը

Որքան դժուար է գրել սիրելի անձի մը մասին, երբ ան ա՛լ չկայ: Որքան ափսոսալի են այն բոլոր խօսքերը, զորս կրնայիր ըսել, բայց չես ըսած իրեն, կարծելով թե զգալը եւ զգացնելը բաւարար են:

Գեղուղէշ հասակ մը. լայն ժպիտ. եւ այդ լայն ժպիտը եզերող առիծի բաշեր. ահա՛ առաջին տպաւորութիւնը:

Յետոյ՝ անսպառ եռանդ մը, որ կը գրկէ քեզ ձմեռ օրուան մը մէջ տաք եւ փափուկ վերարկուի գուրգուրանքով: Եւ ետքը, շատ ետքը կը հասկնաս, թէ որքան կարեւոր էր այդ տաքութիւնը կեանքի այս սառնութեան մէջ, որ իր հիւանդութեան վերջին օրերուն պատեր էր մարմինը ամբողջութեամբ, ու յետոյ պատեց մեզ, իր բացակայութեան:

Այս բոլորէն ետք է որ կու գայ բացայայտումը իր անձին, խառնուածքին, էութեան. որովհետեւ Կասիային էութիւնը գեղեցիկ ու բաց գիրք մըն է, զոր պէտք է կարդալ, էջ առ էջ, յամենալով տողերուն միջեւ թաքնուած աղուորութիւններուն վրայ:

– Համաձայնագրին ստորագրուած օրը մինչեւ առտու լացեր են,– ըսած էր, խօսելով Ղարաբաղի գահավիժող կացութեան մասին:

Նոյն թափով կրնար լալ իր ծանօթներէն մէկուն բարդ ցաւերուն առջեւ: Կրնար նաեւ նոյն թափով խնդալ եւ վարակել շուրջինները իր զուարթութեամբ, ստեղծելով այնպիսի մթնոլորտ մը, որուն մարդ մոլին կը դառնար, ուզելով յաճախ հանդիպիլ իրեն, իր հետ ըլլալ:

Իր մտերիմները, որոնք գրեթէ բոլորն ալ դպրոցական դասընկերուիներ եղած են իրեն, կամ համալսարանի օրերէն մտերմացած բարեկամուիներ, զինք ուժգնօրէն կը սիրեն, իր ամենէն փոքր խնդրանքն իսկ կատարելու պատրաստ:

Կասիան սակայն ընդհանրապէս չի խնդրեր. կը նախընտրէ ի՛նք ընել ամէն բան ոչ միայն իրեն, ամուսինին, քոյրերուն, զարմիկ-զարմուիկներուն, այլ նաեւ բարեկամներուն եւ մնացեալ զինք ճանչցողներուն, երբեմն նաեւ անծանօթներու համար, եթէ որեւէ կարիք ունենան:

Բայց Կասիային մեծ սէրը եղած է հայրենիքը, Հայաստանը, որուն ծանօթացած է ընտանեկան յարկէն ներս, ծնողքին բուռն

սիրոյն որպէս անդրադարձ կարծես, ուռճացած անոնց ոչ միայն խօսքերով, այլ նուիրումով, աշխատանքով, միշտ լաւ տեսնելով Հայաստանի դժխեմ օրերուն մէջ իսկ եւ բարին ցանկալով մեր հայրենիքին համար:

Տարին քանի մը անգամ Կասիան «կ'անհետանար» քաղաքէն. արդէն գիտէինք որ Հայաստան գացեր է. եւ գացեր է լեցուն հոգիով, լեցուն ափերով, լեցուն եռանդով:

Եւ անշուշտ ոչ ոք, բացի քանի մը մօտ ու մտերիմ, կամ «գործին» հետ առնչութիւն ունեցող անձերէ, ոչ ոք կ'իմանար, թէ Կասիան ինչո՞ւ Հայաստան գացեր է, մանաւանդ՝ ի՞նչ տարեր է. իսկական քրիստոնավայել նուիրումով իր ծախն իսկ չէր գիտնար թէ ի՞նչ կ'ընէր աջ ձեռքը:

Այնքան անյարիր էր այս հիւանդութիւնը իրեն, որ նախ չհաւատացինք, ապա՝ բոլորս ալ վստահ էինք, որ Կասիան իր անհատնում եռանդով եւ իր չմթագնող լաւատեսութեամբ պիտի յաղթահարէր զայն:

Յետոյ ընկերային բոլոր ցանցերը ողողուեցան իր նկարներով: Քիչեր էին որ բառերով արտայայտեցին իրենց ցաւը եւ անոր մէջէն կամաց-կամաց սկսաւ ուրուագծուիլ Կասիային դիմանկարը, խճանկարի մը պէս, որ իր գիծերն ու գոյները կը ստանար, դառնալու համար իր վարակիչ ժպիտն ու մեր անսահման տխրութիւնը:

Ի՞նչ ալ որ ընէր, կ'ընէր որպէս ամբողջական հայ, նոյնիսկ իր արաբ կամ օտար աշակերտներուն հետ.

«Քանիներ արդեօք քեզմով ծանօթացան Կոմիտասին եւ սիրեցին հայ երաժշտութիւնը, լսեցին հայերուն եւ Հայաստանի մասին, եւ քու մէջէդ սիրելով այդ երկիրը, ուզեցին երթալ, իրենց աչքերով տեսնել այն, ինչ այդքան կը խանդավառէր քեզ»:

Կասիային «դաւանանքը» կեանքին մէջ լիարժէք ապրիլն էր, եւ այդ լիարժէքութեան մէջ մեծ տեղ տուած էր շուրջիներուն, որոնցմով կարծես կը լեցուէր իր առօրեան, իր կեանքը, իր հոգին:

Իրականութիւնը սակայն տարբեր էր՝ ի՞նքն էր որ կը լեցնէր շրջապատը իր անսահման եռանդով, ի՞նքն էր որ հոգի կը ջամբէր իւրաքանչիւր մեծ թէ փոքր հաւաքի, ի՞նքն էր որ իր պարզ իմաստութեամբ կ'իմաստաւորէր իւրաքանչիւր հանդիպում:

Իր ներկայութեան, մարդ անզգալաբար եւ համօրէն կը վերածուէր իր լաւագոյն տարբերակին, փորձելով ընել իր կարելի-

էն աւելին, փորձելով օգտակար դառնալ ճիշդ այնպէս, ինչպէս Կասիան կ'ընէր:

Շուրջիններուն փոխադրել ունեցած ծայրայեղօրէն դրական ներուժը եւ անով վարակել զիրենք ... քիչերուն տրուած օրինութիւն մըն է:

Իր բարութիւնը բնածին էր եւ անճիգ. երկար ծանօթացումի, երկար տարիներու բարեկամութեան կարիք չկար հմայուելու համար այս վաւերական էակով:

Որքան ալ փորձեմ բառերուն վաւերականութիւն տալ, շատ հեռու են անոնք թարգմանելէ Կասիային ինքնուրոյն ծայնը, հայերէնին շեշտերը, ժպիտին պայծառութիւնը, կամ ծիծաղին վարակիչ որակը: Բառերը անկարող են իր կենդանագիրը նկարելու, միայն կրնան տժգոյն ուրուագիծ մը տալ անկէ:

Անոնք, որոնք վայելած են բարեկամութիւնը այս պարիկին, գիտեն թէ ինչ կորսնցուցին, իսկ անոնք, որոնց համար անծանօթ մըն է ան, երանելի են, որ պիտի չզգան կորուստի այս խորունկ ցաւը:

Քու բացակայութեամբդ մեզի համար աշխարհը նուազ գեղեցիկ պիտի ըլլայ ասկէ ետք, Կասիա Տէօվլէթեան-Ճղալեան:

Մարուշ Երամեան



ԿԱՍԻԱ ՏԵՕՎԼԵԹԵԱՆ-ՃՂԱԼԵԱՆԻ ԽՕՍՔԸ
ՀԲԸՄԻ 100-ԱՄԵԱԿԻ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Գաղափար մը փալու համար իր սուր միտքին եւ հայու զօրաւոր զգացումներուն մասին, որոնց արտայայտութիւնը, կը հաւատար թէ հայերէնն է, այստեղ կը ներկայացնենք Կասիա Տեովլէթեան-Ճղալեանի խօսքը:

«Հայեցի Դաստիարակութիւն եւ Հայերէն Լեզուի ուսուցում». այս խորագրին տակ տեղի ունեցած է խորհրդակցական համագումար մը, ՀԲԸՄիութեան 100-ամեակին առիթով, Ուրբաթ, 14 Ապրիլ 2006-ի առաւօտեան ժամը 9:00-ին, Գահիրէի «Մարիոր» պանդոկին մէջ:

Այդ օրը չորս զեկոյցներ ներկայացուած են՝ «Արեւմտահայերէնի Ներկայի Վիճակը Սփիւռքի Տարածքին» նիւթը պատրաստած էր Տիար Ժիրայր Դանիէլեան, որ տնօրէնն էր Պէյրութի ՀԲԸՄիութեան Յովակիմեան-Մանուկեան, Դարուիի Յակոբեան Երկրորդական Վարժարանին: Երկարամեայ մանկավարժ եւ հայ մամուլի գործիչ, ՀԲԸՄ-ի եւ ՀԵԸ-ի զանազան վարչութիւններու մէջ երկար տարիներ պատասխանատու պաշտօններ վարած բանախօսը նոյն օրերուն այլ ժողովի մը մասնակցելուն պատճառով, ներկայ չէ կրցած ըլլալ, հետեւաբար իր նիւթը կարդացեր է ՀԲԸՄ-ի Եգիպտոսի պաշտօնաթերթ «Տեղեկատու»ի խմբագրուիի տիկ. Արաքսի Տեովլէթեան:

«Հայերէնի Ուսուցման Մակարդակը Վարժարաններէն Ներս» նիւթը ներկայացուած է մանկական եւ ընդհանուր հոգեբանութեան եւ ընկերաբանութեան դոկտոր Նատիա Սարաֆեանի կողմէ:

Լոս Անճելըսի ՀԲԸՄ-ի Մանուկեան-Տեմիրճեան վարժարանի քսան տարիներու վաստակաւոր տնօրէն տիար Յակոբ Յակոբեան, որպէս պատմութեան մասնագէտ եւ հայերէն դասաւանդելու փորձառութիւն ունեցող, հանդէս եկած է «Առաջարկներ Հայերէն Լեզուի եւ Հայեցի Դաստիարակութեան Ծրագիրներու Բարելաւման կամ Պատրաստութեան Մասին» նիւթով:

Այս համագումարին առաջին նիւթով հանդէս եկած է Գահիրէի ներկայացուցիչ, ՀԲԸՄի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի ատենադպրուիի տիկ. Կասիա Տեովլէթեան

-Ճղալեան, «Հայ Լեզուն Անհրաժեշտ է Հայկական Ինքնութեան Պահպանումին Համար» վերնագրով: Բանախօսը բազմաթիւ օրինակներ բերած է այլ ժողովուրդներու իրենց ազգային լեզուի պահպանման ճիգերէն, Պասքերու, Կելտական ժողովուրդներու, տեղաբնիկ ժողովուրդներու՝ Մասօրիներ, եւ այլն, ինչպէս նաեւ մեր լեզուի պահպանման համար եղած պայքարը ներկայացուցած մատչելի օրինակներով: Կելտական ժողովուրդներու մտաւորականներէն մէկուն իրաւացի խորհրդածութիւնը մէջբերելով Ճղալեան ըսած է.

«Այն ժողովուրդը, որ կը կորսնցնէ իր լեզուն, կը խզէ շարունակական կապը իր անցեալին հետ, կը կորսնցնէ նաեւ հսկայական մշակութային աղբիւրներ: Իր մշակութային կեանքը կ'աղքատանայ եւ թիրախ կը դառնայ այս դարուս մշակոյթներու միատարրութեան զանգուածային ալիքին»: Տիկին Ճղալեան, տեղաբնիկ ժողովուրդներու լեզուի պահպանման եւ այդ միջոցով ինքնութեան պահպանման քանի մը օրինակներ բերելով նշած է՝ «Նկատի ունենալով որ լեզուն անհրաժեշտ է մշակոյթի մը, հետեւաբար ինքնութեան պահպանման համար, աշխարհի չորս կողմը ազդու միջոցներու կը դիմեն վերակենդանացնելու համար անհետանալու վտանգին ենթարկուած լեզուները, պահպանելու համար մեծածաւալ տեղեկութիւններ եւ գիտութիւն, որոնց ամբողջական անհետացումը անխուսափելի կ'ըլլայ, եթէ լեզուները կորսուին»: Ապա ներկայացուցած է եգիպտահայ համբաւաւոր երգիծանկարիչ Ալեքսանդր Սարուխանի հետաքրքրական տեսակէտը թէ՛ ազգի մը «Ոգին զինուորն է, լեզուն՝ անոր զէնքը: Ոչ մէկ զինուոր իրաւունք ունի կամովին հրաժարելու իր զէնքէն: Ոգին եւ լեզուն այնքան անբաժանելի են իրարմէ, որքան զինուորն ու զէնքը»: Ապա շարունակած է զեկուցողը. «Ինչպէ՞ս կարելի է զէնքը՝ լեզուն, գործածելի վիճակի մէջ պահել, որպէսզի զինուորը՝ ոգին չմեռնի: Զէնքը՝ լեզուն, գործածելի վիճակի մէջ կը մնայ, երբ հայերէն լեզուին ու մշակոյթին նուիրուած ուսուցիչներու, խմբագիրներու, լրագրողներու, մտաւորականներու, արուեստագէտներու եւ ընդհանրապէս հայկական ազգային ու բարեսիրական հաստատութիւններու մէջ աշխատող հայ պաշտօնեաներու պայմանները եւ նիւթական մակարդակը կ'ըլլան այնքան լաւ, որ հայ անհատին երազը ըլլայ այդպիսի տեղ մը աշխատիլ, այդպիսի ասպարէզ մը ընտրել»:

«Ինքնապահպանման գործընթացին մէջ լեզուի կարելորու-

թեան հարցը կարելի է տեսնել նաեւ տիրապետող ազգերու վարած քաղաքականութեան մէջ: Օրինակ՝ Սովետ. Միութեան մէջ, որ բազմազգ դաշնակցային պետութիւն մըն էր, ամէն ինչ կը փորձուէր ազգերու ճուլումի ընթացքը արագացնելու, զոր յաջողցնելու համար ամենաազդու միջոցը լեզուն եւ կրօնքը ժխտելն էր: Ուրեմն լեզուն, եւ որոշ չափով կրօնքը, առաջին թիրախը հանդիսանալով որեւէ ազգի անհետացումը ծրագրող տիրապետող ուժերուն, կը դառնան ինքնութիւնը պահպանող ամենակարեւոր ազդակները: Մեր լեզուին (նկատի ունինք արեւմտահայերէնը) նահանջի իսկական պատճառը եղած ցեղասպանութիւնը, որ 1915-էն շատ առաջ սկսած էր, զոր այսպէս սահմանեց Ճդալեան՝ «Ցեղասպանութիւնը միայն ժողովուրդի մը զաւակները սպաննելով չէ որ կ'իրականանայ: Ցեղասպանութիւնը ազգի մը ինքնութեան անհետացումն է, զոր կարելի է յաջողցնել արգիլելով լեզուն, փոխել տալով մարդոց անունները, խեղաթիւրելով պատմութիւնը, կործանելով մշակութային կոթողները»: Յարգելի բանախօսուիին որպէս եզրակացութիւն փաստեր ներկայացնելով հաստատեց, թէ «Ազգի մը ինքնութիւնը պահպանող ամենակարեւոր ազդակներն են լեզուն եւ որոշ չափով կրօնքը: Թէեւ, որպէս յենակներ, իրենց տեղն ունին սեփական հողը, պատմութիւնը, աւանդութիւնները, սակայն այս բոլորին կորիզը լեզուն է: Լեզուն է որ սերունդէ սերունդ կը փոխանցէ այդ յենակները եւ կը զօրացնէ զանոնք»:

«Տեղեկագիր», Նոր Շրջան, թիւ 40-41, Հոկտեմբեր 2006, էջ 40.



Եգիպտոսի ՀԲԸՄիութեան Շրջանակային Ցանձնաժողով 2006

ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Կասիա Տէօվլէթեանի առաջին օրը Գալուստեան մանկապարտէզէն ներս:

Սկսան գալ ծնողները, իրենց զաւակներուն ձեռքէն բռնած: Աչքիս զարկաւ անուշիկ տեսարան մը՝ երկու աղջիկներ, մէկը խարտիշահեր և ճերմակամորթ, միւսը թուխ: Նոյն ձևով հագուած էին՝ առանց մէջքի, մինչև ծունկը հասնող հագուստներ, երկար գիծերով, ուներէն կախուած շատ փոքրիկ պայուսակներ, իսկ իրենց գլխուն՝ յարդէ գլխարկներ:

Խարտեաշը ինքնավստահ քայլերով, նայուածքը ուղիղ, մօտեցաւ շէնքի մուտքին: Թուխը տատամսելով կը հետնէր իրեն:

Երկար տարիներ անցան, բայց այդ տեսարանը այսօրուան պէս կը յիշեմ:

Կասիան էր և իր զարմուհին՝ Իրիսը:

Օր մը Կասիային հօր՝ Նորայր Տէօվլէթեանին ըսած էի, ականարկելով իր երեք դուստրերուն.

«Աղջիկներդ մէկական վարդեր են կուրծքիդ վրայ»:

Այսօր բոլորս ալ խորունկ ցաւ կ'ապրինք Կասիային կորուստին առջև, բայց մեր ունեցած յիշատակներով կը փորձենք մխիթարուիլ, յիշելով ինչ որ տուաւ մեզի որպէս բարեկամութիւն, որպէս չխամրող յիշատակ:

Միշտ մեր սրտին մէջ պիտի մնաս, սիրելի Կասիա:

Սիրարփի Նաճարեան

ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Դպրոցական տարիներէն արդէն ընկերուիներ էինք, ինք Գալուստեանէն, ես Նուպարեանէն եկած, միասին սկսանք Րամսիս Գոլէճ յաճախել, որ նախապէս Ամերիկեան գոլէճ էր. հոն պասքէթի խումբը գրեթէ ամբողջութեամբ հայերէ կազմուած էր:

Ամերիկեան Համալսարանէն ներս ես միասին էինք, Կասիան economics-էն, ես՝ mass com-էն վկայուեցանք:

Այս ամբողջ ընթացքին անշուշտ երկուքս ալ Գեղարուեստասիրաց կ'երթայինք, որ Կասիան շատ եռանդուն անդամ էր եւ ժրջան ժողովական: Միասնաբար մասնակցած ենք «Զանգեզուր» պարախումբի աշխատանքներուն եւ ելոյթներուն, տարիներու ընթացքին:

Մեր ամուսինները ես բարեկամ էին, ինչ որ մեզ աւելի մօտեցուցած, մտերմացուցած էր:

Թերեւս շատերու ծանօթ չէ, բայց վերջին ինը տարիներուն պատասխանատուն եմ Society for orphaned Armenian relief-ի, համացանցային բարեսիրական ընկերութիւն մը, որ աշխարհի բոլոր հայ որբերուն նիւթական օգնութիւն կը հասցնէ:

Երբ սկսայ, Կասիան հետս էր: Սկիզբի շրջանը շատ դժուար էր մեր աշխատանքը, որովհետեւ պէտք էր բոլորին համոզէինք, որ ասիկա վստահելի ընկերութիւն մըն է, որ 15 տարիէ ի վեր գոյութիւն ունի, բազմաթիւ մասնաճիւղեր ունի եւ այլն: Պէտք եղաւ նաեւ էջմիածին երթալ: Այս բոլորին մէջ Կասիան հետս էր, իսկ այսօր՝ ես մինակ եմ:

Իր ներդրումը մեծ էր մեր գաղութին մէջ եւ իր կորուստը՝ ծանր:

Պրիծիթ Պոհճալեան-Գալընեան

ՅԻՇԱՏԱԿՆԵՐ

Երբ դիմատետրը այսօր զարդարուած է Կասիային նկարներով, երկինքն ալ նոյնպէս բախտաւորութեցաւ լուսաւոր աստղով մը: Կասիային ճանչցողը լաւ գիտէ իր որքան ուղղամիտ, ճիշդին ճիշդ՝ սխալին սխալ ըսող, հայրենասէր, միութիւնը սիրող եւ ազգապահպանման հարցով մտահոգուող անձ մը ըլլալը:

Անցեալ շաբաթ երբ հանդիպեցայ իրեն՝ իր տունը, սառած ձեռքերը համբուրեցի: Այն դաշնակահարուհիին ձեռքերը՝ որ 35 տարի առաջ անկրկնելի «Կոռնկ» երգչախումբին մեղեդիները նուագած էին Հալէպի մէջ, ու բոլորիս հիացմունքին արժանացած: Ու քովէն չմեկնած, աչքերը փակ ինծի ըսաւ՝ «Վարձքդ կատար»: Կասիա՛, ինչի համար կ'ըսես, ըսի: «Կոկանեանի համար ըրածներուդ» ըսաւ:

Որքան անձ մը վեհ ու հաւատարիմ պիտի ըլլայ իր կուսակցութեան կամ միութեան, որուն կը պատկանի, որ իր ամենադժուարին պահուն կարենայ յիշել ու շնորհակալ ըլլալ մէկու մը՝ որ իր սկսած գործը կը շարունակէ: Կը խոստանամ շարունակել այդ առաքելութիւնը, այնքան ժամանակ որ ոյժն ու կորովը ունիմ:

Կասիա՛, թէեւ յաճախ չէինք տեսնուեր, բայց միշտ կապի մէջ էինք: Գիտես թէ որքան կը սիրեմ քեզ, վստահ եմ այդ սէրը փոխադարձ էր: Երբեք պիտի չմոռնամ իմ տագնապալի օրերուս կողքիս ըլլալդ եւ ինծի տեսական ոյժ ու յոյս ներշնչելդ:

«Հայ մօր ճակատագիր ունեցար,- ըսիր,- բայց պիտի յաղթահարես»:

Քու մեկնումովդ անտարակոյս, ստեղծեցիր խոշոր բաց մը, ու եզիպտահայ գաղութը կորսնցուց Մարդ մը՝ իր մարդկային ու ազնիւ յատկանիշներով: Հայ մը՝ օժտուած հայու բոլոր առաքինութիւններով, գիտակից ու արժանաւոր, յարգուած ու սիրուած բոլորէն:

Հանգչիր խաղաղութեամբ, ապրէ՛ լոյսերու մէջ եւ անդէականէն դիտէ աշխարհը եւ սիրելիներդ: Դուն, վստահ եղի՛ր, պիտի մնաս անմոռանալի եւ պիտի յիշենք քեզ յաւերժ:

Հողը թեթեւ գայ վրադ....

Լայա Շամամեան-Նիկոլեան



Եգիպտոսի ՀԲԸՄիության Շրջանակային Ցանձնաժողով՝ 2014

